ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **11 օգոստոսի 2021թ.**

2021թ-ի օգոստոսի 06-11-ը ՀՀ, ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փող., 2 շենք հասցեում գտնվող «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ վակումային խցիկի համալրող պարագաների հավաքածուի ձեռքբերման ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Ավետիսյան՝ Հիմնադրամի գլխավոր ճարտարագետի տեղակալ,

Ա. Մարգարյան՝ Հիմնադրամի առաջատար գիտաշխատող,

Վ. Կակոյան՝ Հիմնադրամի ավագ գիտաշխատող,

Ս. Բեյբության՝ Հիմնադրամի պահեստապետ,

Ա. Բաղրամյան՝ Հիմնադրամի ավագ հաշվապահ

Նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Ավետիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ք. Ազիբեկյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնան ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի, ներկայացված հայտերի բացման, գնահատման, առաջարկված գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ և ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լ. Ավետիսյանը նիստը հայտարարեց բացված և հայտնեց տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների վերաբերյալ տեղեկատվությունը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ)
1	վակումային խցիկի համալրող պարագաների հավաքածու	5100000

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2021 թվականի օգոստոսի 06-ին, ժամը «15:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե	Էլ. փոստ
1	«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	ք. Երևան, Լենինգրադյան 31/7	gnumner.taghem@gmail.com
2	«Ինֆոտենդեր» ՍՊԸ	ք. Երևան, Ռուբեն Սևակի փ., շ. 2/1, բն. 21	infotender2020@mail.ru
3	«Լեմուր» ՍՊԸ	ք. Երևան, Ա. Տիգրանյան 5/12, բն. 20	llclemur@gmail.com

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.
2. Ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ «Ինֆոտենդեր» ՍՊԸ-ի՝ բացակայում են հրավերով պահանջվող առաջկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հրավերի հավելված 1.1-ի:
3. Ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ

- «Ինֆոտենդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու դիմումում՝ համաձայն հրավերի հավելված 1-ի, վավերապայմանները թերի են լրացված, մասնավորապես՝ բացակայում են սպասարկող բանկի և հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունները:
- «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ՝ համաձայն հրավերի հավելված 1.1-ի, բացակայում է վակումային խցիկի համալրող պարագաների հավաքածուի «ISO-K 63 սկավառակի սեղմիչ» դետալի ամբողջական նկարագիրը:
- «Լեմուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումում՝ համաձայն հրավերի հավելված 1-ի և առաջարկվող ապրանքի ամբողջական

նկարագրում՝ համաձայն հրավերի հավելված 1.1-ի, ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված՝ «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26» ծածկագրի փոխարեն՝ «ԱՄՄԱՊԿ-ԳՀԱՊՁԲ-21/9», իսկ ներկայացված գնային առաջարկում՝ համաձայն հրավերի հավելված 2-ի, գնման առարկայի անվանումը սխալ է լրացված՝ «վակումային խցիկի համալրող պարագաների հավաքածու»-ի փոխարեն՝ «մետաղադրամների հաշվիչ մեքենաներ»:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

Չափաբաժնի		Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները		
N	Անվանում	անվանում	Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի նշում՝ «X»	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	վակումային խցիկի համալրող պարագաների հավաքածու	«ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ	1	X	4236666.67	847333.33	5084000
		«Ինֆոտենդեր» ՍՊԸ	2		5000000	-	5000000
		«Լեմուր» ՍՊԸ	-		20000000	-	20000000

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն.

2. «Լեմուր» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-21/26 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի համաձայն՝ գնային առաջարկը ներկայացված չէ հրավերի պահանջներին համապատասխան:

3. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցմամբ առաջարկել մասնակիցներին հրավերով սահմանված կարգով իրականացնել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունների շտկումները և հանձնաժողովին ներկայացնել փաստաթղթերի շտկված տարբերակները:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակիցների կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել են շտկման ենթակա անհամապատասխանությունների շտկումները և ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները:

2. Ներկայացված հայտերը գնահատել բավարար, բացառությամբ «Լեմուր» ՍՊԸ-ի:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. ԸՆՏՐՎԱԾ և ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Ավետիսյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Մարգարյան _____

Վ. Կակոյան _____

Ս. Բեյբության _____

Ա. Բաղրամյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ք. Ազիբեկյան _____